

# ԱՍՏԾՈ ՄՈՏ ՏԱՆՈՂ ճԱՆԱՊԱՐՅԸ

Բնագրի անվանումը՝

Der Weg zu Gott

Copyright . 1985 by  
Freie Volksmission e.V., Krefeld (Գերմանիա)

Հեղինակ՝

Միսիոներ Էվալդ Ֆրանկ, Կրեֆելդ (Գերմանիա)

Ընդօրինակման (նույնիսկ մասնակի) և  
թարգմանության բոլոր իրավունքները պերապահված  
են:

Հրատարակիչ՝

Ազատ միսիոներների կենտրոն, ա/ա 68, 375010 Երևան  
10 Հայաստան  
Էլ. փոստ. [kelisa@kelisanet.org](mailto:kelisa@kelisanet.org)

## ԱՍՏԾՈ ՄՈՏ ՏԱՆՈՂ ճԱՆԱՊԱՐՅԸ

Ոչ մի ուրիշ թեմա այնքան չի հուզում հոգիները և այնքան արագորեն բաժանում նրանց, որքան Աստծո վերաբերյալ թեման: Բայց վերջում ոչ ոք Նրանից չի փախչի, նույնիսկ արեհստղ: Ամեն մարդ ծնվում է որոշակի գաղափարախոսության մեջ, և մարդկանցից մեծամասնությունը մինչև վերջ մնում են դրանում, առանց ջանալու համոզվել դրա ճշգրտության և ճշմարտացիության մեջ: Ամենուրեք ընդունված է շարունակել ապրել հայրերից ժառանգած ավանդույթներով: Նույնիսկ այն մարդիկ, ովքեր կատարում են իրենց կրոնական պարտականությունները, ըստ եռթյան ուզում են, որ իրենց հանգիստ թողնեն և չխօսեն Աստծո վերաբերյալ թեմաներով: Նրանք ուզում են մի Աստծո, որը համապատասխանում է իրենց կրոնին և կարծիքին: Այդպիսի զարգացման պատճառը միայն կրոնի մեջ չէ: Ծնված օրվանից մինչև մեռնելը մարդիկ շրջապատված են կրոնական ծեսերով և արարողություններով և երբեք չեն լսել աստվածային փրկության Պատգամը ու չեն գտել ներքին խաղաղություն:

Նույնիսկ քրիստոնեական կրոնները բացառություն չեն կազմում և պետք է խոր

քննության ենթարկվեն: Միայն քրիստոսին վկայակոչելը ոչ մեկի օգուտ չի բերի, այլ բոլորս կ արիք ունենք Նրա հետ անձնական հարաբերության: Բոլոր պաշտոնական և անկախ եկեղեցիները, մինչև ամենափոքր խմբավորումները օգտագործում են իրենց ընտրած սուրբգրային համարները, որոնք համապատասխանում են իրենց հասկացողությանը: Ընդհանուր առմամբ այսօրվա քրիստոնեությունը ոչ մի ընդհանուր բան չունի առաջին եկեղեցու հետ: Նույն Աստվածաշունչը հարյուր տեսակի տարբեր մեկնություններ ունի: Աստվածային խոսքի և ողջամիտ վարդապետության փոխարեն անընդհատ կիրառում են մարդկանց կողմից արված նոր մեկնություններ, նոր վարդապետություններ և նոր դոգմաներ, որոնք, սակայն, ոչ մի սուրբգրային հիմք չունեն: Դա անվանում են «քրիստոնեական ավանդույթ»:

Շատ հիասթափված մարդիկ հեռանում են հավատքից: Ինքնարերաբար կրոնական ասպարեզում հարց է առաջանում. «Գոյություն ունի՞ արդյո ք մի վստահելի միջոց, մի բացարձակ, վերջնական չափանիշ, որով պետք է ամեն բան ստուգվի: Կա՞ արդյոք մի հաստատված ճշմարտություն, որը կասկածից վեր է, և որի վրա կարող ենք հույս դնել: Եթե այո, որտե՞ղ է այն»:

Շատ հիասքափված մարդիկ հարցնում են իրենք իրենց. «Արդյո՞ք կա Աստված, որ մտահոգվում և հետաքրքրվում է մեզանով։ Եթե այո, որտե՞ղ կարող ենք գտնել Նրան»։

Այս կարճ շարադրանքի նպատակն է մղել յուրաքանչյուր ընթերցողին քննադատաբար մտածելու այս թեմայի վերաբերյալ և փնտրելու ճշմարտությունը, որովհետև ի վերջո, խոսքն անձանբ ձեր մասին է, սիրելի ընթերցող և այն վայրի մասին, որտեղ ուզում եք անցկացնել հավիտենությունը։

Աստված ծրագիր ունի մարդկության համար. սա պարզ և հասկանալի է։ Մինչդեռ քիչ են Աստծո մարդիկ, առաքյալների և մարգարեների օրինակով լուսավորված մարդիկ, որոնք կարող են ուրիշներին ցույց տալ Աստծո մոտ տանող ճանապարհը, որովհետև իրենք էլ գիտեն այդ ճանապարհը և գնում են դրանով։ Դարեր շարունակ այն միտքը, որ Աստված, կրոնը և եկեղեցին կապված են իրար հետ, արմատացել է մարդկանց մտածողության մեջ։ Եթե այդպէս է, երեք հարյուրից ավելի ո՞ր քրիստոնեական դավանանքի հետ պետք է նա նույնանա։ Արդյո՞ք նա կաթոլիկ է, թե՞ ավետարանական, կամ արդյո՞ք նա է ստեղծել

տարբեր կրոնական համայնքները։ Գուցե մուսուլմանները, իինդուիստները, բուդդիստները կամ գոյություն ունեցող այլ խմբե՞րն են ծիշտ ճանապարհի վրա։ Ի վերջո բոլորը հավակնում են, որ լուսավորված են վերևից և ունեն ճշմարտությունը։ Մի՞թե Աստծո Թագավորության քողի տակ յուրաքանչյուրը իր սեփական կրոնական թագավորությունը չի կանգնեցրել։

Աստված ծրագիր ունի մարդկության համար և հիմա իրականացնում է այդ ծրագիրը։ Այդ ծրագիրը ավելի լավ հասկանալու համար պետք է ազատվենք բոլոր ավանդական հայացքներից և վերադառնանք սկզբնական ելակետին։ Աստված ոչ մեկից կույր հավատք չի պահանջում։ ճշմարիտ հավատքը երկու առողջ հոգևոր աչքեր ունի և երկու առողջ հոգևոր ոտքեր։ Այն հաստատված է Հին և Նոր Կտակարանների անսասան հիմքի վրա, Աստվածաշնչի վրա, որի մեջ Աստված ցույց է տվել մարդկության վերաբերյալ իր ողջ խորհուրդը սկզբից մինչև վերջ։ Աստվածաշունչը ցույց է տալիս Աստծո ճանապարհը դեպի մեզ, նաև մեր ճանապարհը դեպի Աստված և մարդկության հետ Աստծո հանդիպման վայրը։

Մարդկության համար Աստծո ծրագիրը արդեն սկսվել է արարաչագործության ժամանակ: Անշուշտ, մեզանից յուրաքանչյուրը հիացել է բնության գեղեցկությամբ, որը պետք է պահպանել: Բայց ոչ բոլորն են, որ դրանում տեսնում են Արարչի գոյությունը, թեև տրամաբանությունն էլ խոսում է այդ մասին: Բոլորին հայտնի է, որ որոշ ժամանակ ի վեր Ամենակարողի գոյությունը կասկածի է ենթարկվել և արարչագործության պատմությունը համար վել անհավանական: Աթե իստ փիլիսոփաները մարդկանց մղել են հավատալու իրենց հակասական տեսություններին և դրանցով նրանց տարել անհավատության: Նա, ով ժխտում է, որ Աստված է Արարիչը և կարծում է, որ ամեն բան ստեղծվել է ինքն իրեն, նույն կերպ կարող է ուրանալ սեփական հորը և ասել, որ ինքը էվոլյուցիայի արդյունք է: Ո՞վ կարող է պատկերացնել, որ տիեզերքը իր անծայրածիր տարածքով, անթիվ համաստեղություններով և կատարյալ ներդաշնակությամբ ստեղծվել է ինքն իրեն: Մինչև հիմա ոչինչ ինքն իրեն չի ստեղծվել, և դեռ ոչ չի ասել, որ կարողացել է թեկուզ մի փոքր բան բարելավել ողջ արարչագործության մեջ: Մտածենք միայն օվկիանոսի խորքում գտնվող այն անթիվ կենդանի արարածների մասին, որոնք աճում են

կ ա տ ա ր յ ա լ պ ա յ մ ա ն ն ե ր ո ւ մ , բ ո լ ո ր  
մ ա յ ր ց ա մ ա ք ն ե ր ո ւ մ գ տ ն վ ո դ ա մ ե ն տ ե ս ա կ  
կ ե ն դ ա ն ի ն ե ր ի և թ օ չ ո ւ ն ն ե ր ի մ ա ս ի ն , ո ր ո ն ք  
կ ա տ ա ր յ ա լ կ ե ր պ ո վ հ ա ր մ ա ր վ ա ծ ե ն կ լ ի մ ա յ ա կ ա ն  
պ ա յ մ ա ն ն ե ր ի ն :

Այսօր էլ ն ր ա ն ք շ ա ր ո ւ ն ա կ ո ւ մ ե ն գ ո յ ո ւ թ յ ո ւ ն  
ո ւ ն ե ն ա լ , ի ն չ պ ե ս Ա ր ա ր ի չ ը ի ր ա մ ե ն ա կ ա ր ո դ խ ո ւ ն  
ն ր ա ն ց պ ա տ վ ի ր ե լ է բ ո լ ո ր բ ա ն ե ր ը ս տ ե ղ ծ ե լ ի ս  
(Ս ա ղ մ . 119:90,91): Ա մ ե ն տ ա ր ի ց ա ն ո ւ մ և հ ն ձ ո ւ մ ե ն  
ա յ ն պ ե ս , ի ն չ պ ե ս Ա ս տ վ ա ծ է հ ա ս տ ա տ ե լ ե ր կ ի ր ը  
ս տ ե ղ ծ ե լ ո ւ ց ի վ ե ր . «Ո ր չ ա փ ո ր ե ր կ ի ր ը կ ը մ ն ա յ , ս ե ր մ  
ո ւ հ ո ւ ն ձ ք ... պ ի տ ի չ դ ա դ ա ր ի ն » (Ծ ն ն դ . 8:22): Ք ա ս ո ը  
ս տ ե ղ ծ վ ո ւ մ է մ ի ա յ ն ա յ ն ժ ա մ ա ն ա կ , ե ր բ մ ա ր դ ը  
մ ի ջ ա մ տ ո ւ մ է բ ն ո ւ թ յ ա ն ը : Ա մ ե ն օ ր մ ի լ ի ա ր դ ա վ ո ր  
մ ա ր դ ի կ ե ն կ ե ր ա կ ր վ ո ւ մ և ե թ ե ա մ ե ն ի ն չ  
ա ր դ ա ր ո ւ թ յ ա ն ք բ ա ժ ա ն ե ի ն , ե ր կ ր ի վ ր ա ո չ ո ք չ է ր  
դ ա տ ա պ ա ր տ վ ի ս ո վ ա մ ա հ ո ւ թ յ ա ն :

Ա յ ն ֆ ա ս տ ը , ո ր ա մ ե ն ա ր ա ր ա ծ բ ա զ մ ա ն ո ւ մ է ի ր  
տ ե ս ա կ ի պ ե ս , կ մ ն ա մ ի ն չ է ժ ա մ ա ն ա կ մ ե ր ի վ ե ր ջ ը :  
Մ ի ն չ է հ ի մ ա ո չ ո ք չ ի տ ե ս ե լ , ո ր կ ա պ ի կ ը մ ա ր դ  
դ ա ռ ն ա , կ ա մ է լ մ ա ր դ դ ա ռ ն ա կ ա պ ի կ : Ա մ ե ն տ ե ս ա կ  
մ ն ո ւ մ է ա յ ն պ ե ս , ի ն չ պ ե ս ե ղ ե լ է ա ր ա ր չ ա գ ո ր ծ ո ւ թ յ ա ն  
ժ ա մ ա ն ա կ : Ա յ սօր է լ ց ա ն վ ո ւ մ է ն ո ւ յ ն ս ե ր մ ը , ո ր ը  
ա ռ ա ջ ի ն ա ն գ ա մ հ ո ղ ի ց դ ո ւ ր ս ե կ ա վ Ա ր ա ր չ ի

ամենակարող խոսքով: Նույն ծառերն ու մրգերն են աճում, նույն կենդանիները դեռ ապրում են երկրի վրա: Նույնպես մարդը՝ արարչագործության պսակը, ճիշտ այնպիսին է, ինչպիսին եղել են Ադամն ու Եվան այն ժամանակ: Նրան տրվել են ստեղծագործական ընդունակություններ: Դա հատկապես ակնհայտ է մեր ժամանակներում: Իրականում գրեթե չկա մի բան, որ մարդ արարածը չկարողանա անել, ինչպես Տերն ասաց. «... ու իինա ինչ որ շինել կը խորիին, բան մը չկայ, որ արգիլէ» (Ծննդ. 11:6):

Միակ բանը, որ մարդը չի կարող անել, սա է կյանք ստեղծել: Նրանք, ովքեր հավատում են եվուուցիայի տեսությանը և խոսում են նախնական բջի մասին, պետք է նաև մեզ ասեն՝ ով է կյանք տվել այդ բջին: Նաև պետք է նրանց հարցնել, թե ով է մարդկանց տվել բազմանալու ընդունակությունը: Աստծո գոյությունը ժխտողները ինչու<sup>շ</sup> չեն փորձում արիեստական ցորեն ցանել: Որովհետև նրանք շատ լավ գիտեն, որ այն չի ածի, որովհետև կյանքի սաղմը չունի իր մեջ: Տեսնելով այս մեծ և համապարփակ արարչագործությունը, ամեն նորմալ և մտածելու ընդունակ մարդ կընդուներ գերիշխան Արարչի գոյությունը: Եթե մարդիկ իրենց ամբարտավանությամբ չհեռանային Աստծուց,

դեռևս կկարողանային հավատալ Նրա Խոսքին, որովհետև Աստված և Իր Խոսքը Վստահելի են:

Աստծո կամքով, արարչագործության սկզբից ի վեր մարդիկ սահմանված էին իրենց Արարչի հետ հավիտենական հաղորդակցության մեջ ապրելու համար: Դրա համար յուրաքանչյուրի սրտում կա Երկրապագելու բուռն ցանկություն, որը չի բավարարվում: Բոլորն իրենց հոգում ունեն մի անորոշ ցանկություն, ամեն մարդ ինչ-որ բան է փնտրում, բայց կա միայն Մեկը, որը կարող է գոհացնել այդ փափագը և մեզ Երջանկացնել: Բոլոր կրոններում պաշտամունքի բաղադրիչ մասը Երկրապագությունն է: Մուսուլմաններն աղոթում են Ալլահին: Նրանց մարզարեն՝ Մուհամեդը, Մեսիահին չի համարում Փրկիչ և Տեր, այլ միայն մարզարե: Մուհամեդը բացարձակ միաստվածություն էր քարոզում և բնավ չէր հասկանում, որ Աստված ինքը բացահայտվեց Քրիստոսի մեջ: Նա չէր կարող ընթռնել, որ Աստված հայտնվեց Երկնքում որպես Յայր, հետո Երկրի վրա՝ Որդու մեջ և հիմա գործում է Սուրբ Յոգով: Իսկ հինդուիստները հավատում են մի քանի աստվածների: Նրանց պատկերացումներում կա նախ մի Երրորդություն՝ արարիչ Բրահման, պահապան Վիշնուն և կործանող Շիվան, և դրանց հետևում են մյուս աստվածները:

Եթե թվարկեինք բոլոր կրոնները, շատ հեռուն կգնայինք: Իսկ նա, ով ասում է, որ ոչ մի գործ չունի կրոնի հետ, երկրպագում է մամոնային (հարստությանը), իր սեփական ցանկություններին կամ որևէ այլ կուռքի: Անկախ գույնից, ռասայից և ազգությունից ամեն արարածի մեջ կա մի խոր և անհագ փափագ, որը կարող է իսկապես բավարարվել միայն այնպիսի բանով, որ հավիտենական է և աստվածային:

Եղել է մի ժամանակ, երբ առաջին մարդիկ ուղղակի հաղորդակցություն են ունեցել Տեր Աստծո հետ. դա սկզբում էր, Եղեմի պարտեզում: Անմեղության այդ սկզբնական վիճակում նրանք չեն ճանաչում ո՞չ ցավ, ո՞չ վիշտ, ո՞չ հիվանդություն, ո՞չ մահ: Որպես Յավիտենականի ստեղծածներ, նրանք սահմանված էին հավիտենապես ապրելու: Տեր Աստված նրանց օժտել էր ազատ կամքով, որպեսզի նրանք կարողանային ընդունել իրենց սեփական որոշումը: Նրանք կարող էին ընտրություն կատարել բարու և չարի, հնագանդության, հավատքի և անհավատության միջև: Այսօր էլ նույնը վերաբերում է մեզ բոլորիս: Նրանք պետք է քննություն հանձնեին, բայց երկուսն էլ պարտվեցին: Նախ՝ Եվան, ապա՝ Ադամը: Եվան ականջ դրեց սատանայի ստերին, իսկ Ադամը լսեց

Եվային: Այդպիսով նրանք երկուսն էլ ընկան հակառակորդի ազդեցության տակ և, չնայած իրենց գիտությանը, խախտեցին Աստծո Խոսքը: Աստված, որը ճշմարիտ է, կատարեց իր Խոսքը և նրանց վտարեց Եղեմի պարտեզից: Աստծո հետ նրանց հաղորդակցությունը խզվեց, և տառապանքն ու մահը թափվեցին ողջ մարդկության վրա:

Թող ոչ ոք ձեռքերը չլվանա և իրեն անմեղ կարծելով՝ ասի. «Ինչո՞վ է այդ ամենը ինձ վերաբերում», որովհետև ամեն տղամարդ և ամեն կին կվարվեր ճիշտ Աղամի և Եվայի նման: Աստված ճանաչում է մեզ բոլորիս և սկզբից ի վեր գիտեր, որ ոչ մի մարդ ընդունակ չէ հնագանդվել իր պատվիրաններին: Բայց իր արդարությամբ Նա տվեց իր պատվիրանները, որպեսզի մենք ճանաչեինք Նրա հանդեպ գործած մեր մեղքերը, տեսնեինք փրկության անհրաժեշտությունը և ընդունեինք ճիշտ որոշում: Մենք ազատ կամք ունենք, և բարեբախտաբար, ոչ ոքի չեն ստիպում ընտրություն կատարելու մեջ: Եթե աստվածային օրենքը չլիներ, ոչ ոք չէր հասկանա, որ խախտել է Աստծո Խոսքը և չէր տեսնի մեղքերի թողության և փրկության անհրաժեշտությունը: Խղճմտանքը հանդիմանում է մեզ բոլորիս, նույնիսկ նրանց, ովքեր երբեք չեն լսել աստվածային Պատգամի

մասին և երբեք չեն կարդացել Աստվածաշունչը: Ամեն մարդ գիտի, թե երբ է սուտ խոսում, խարում, գողանում կամ անում ինչ-որ արգելված բան: Մեր խղճմտանքը հաճախ խստորեն զգուշացնում է մեզ: Բոլոր մարդիկ, լինեն աղքատ թե հարուստ, բարի թե չար, հավասարապես մեղավոր են Աստծո առաջ: Այս աշխարհում բոլորս ծնվել ենք մեղավոր, բաժանված Աստծուց: Թող ոչ ոք չմտածի, որ այս ամենը այնքան էլ լուրջ չի, որովհետև, ի վերջո, ոչ ոքի չի սպանել, ոչ էլ ուրիշ հանցանք է գործել: Աստծո արդարացի դատավճիռը արձակվել է բոլորիս համար, ահա թե ինչու բոլորս պետք է մեռնենք: Բայց սա վերջը չէ:

Առաջին մեղքից հետո Ադամն ու Եվան ստիպված եղան լքելու Եղեմի պարտեզը, արգելափակվեց պարտեզի մուտքը, և Աստծո հետ հաղորդակցությունը դադարեց: Դա սարսափելի էր: Մինչդեռ Աստված մեզ չմոռացավ և բացեց վերադարձի ճանապարհ դեպի Նա: Տերը եկավ մեզ մոտ իր սիրով և անսահման գրությամբ: Քրիստոսով Նա հանդիպեց մեզ և կնքեց Նոր Ուխտը: Միայն Քրիստոսով կարող ենք հանդիպել Աստծուն և Ուխտի մեջ մտնել Նրա հետ:

Քանի որ մեղանչել էինք այս երկրային մարմնի մեջ, Աստված պետք է այս բնույթի մարմին ստանար,

որպեսզի իր անձով ողջ մարդկությանը ներկայացնելով՝ միակ Անմեղը վերցներ իր վրա բոլորիս մեղքի պարտքը և մեզ հաշտեցներ իր հետ։ Դա կատարվեց մեր Տեր Յիսուս Քրիստոսի միջոցով, ով այս խոսքերն ասաց խաչի վրայի ավագակին. «Եշմարիտ եմ ասում քեզ. դու այսօր ինձ հետ դրախտում կլինես» (Ղուկաս 23:43): Ամեն, ով որ Տիրոջ անունը կանչի, կփրկվի և կզնա դրախտ։

Մեր Փրկչի ծնունդը եղավ զուտ աստվածային գերբնական զորությամբ, որին Մարիամը ոչ մի մասնակցություն չի ունեցել։ Մարիամը այս մեղսաբնույթ մարդկության մեջ ծնվեց բոլոր մարդկանց նման, ուստի նույնպես կարիք ուներ փրկության։ Ոչ թե Մարիամը, այլ Փրկիչը ծնվեց առանց մեղքի այս մեղսաբնույթ մարդկության մեջ, որպեսզի ազատեր նրանց սկզբնական մեղքից։

Յիսուս Քրիստոսը Աստծո հայտնությունն է մարդկային մարմնի մեջ։ Նա միաժամանակ Աստված էր և մարդ։ Յոգով Աստված էր, մարմնով՝ մարդ։ Նա ոչ մի պատվիրան չխախտեց, Նա կատարելապես սուրբ էր և առանց մեղքի։ Ահա թե ինչու միայն Նա կարող էր վերցնել բոլորիս մեղքերը և մերնել մեր փոխարեն։ Յաշտեցման և մեղքերի թողության համար թափված Նրա զոհի արյունը

հավատացողներին տվել է կատարյալ քավություն և լիարժեք փրկություն: Ահա սա է անսասան խարիսխը յուրաքանչյուր աստվածաշնչային քրիստոնյայի համար: Երրորդ օրվա իր հարությամբ փրկագննան գործը աստվածային կերպով պսակվեց և հաստատվեց: Ապացուցվեց, որ մահը, դժոխքը և սատանան պարտված են: Ամեն: Հարությունից հետո Նա բազմիցս հայտնվեց Իրեններին իր փառավոր համբարձմանը նախորդող 40 օրերի ընթացքում: Մեզանից առաջ Նա մտավ փառքի մեջ և ասաց մեզ. «Գնում են ձեզ համար տեղ պատրաստելու... նորից կգամ ու ձեզ Ինձ մոտ կվերցնեմ» (Յովհ.14:2,3): Նրա վերադարձի ժամանակ բոլոր մարդկանց որդիները, ովքեր իրենց երկրային կյանքի ընթացքում Աստծո որդիներ են դարձել, մասնակից կլինեն առաջին հարությանը, Նրան կտեսնեն և Նրա նման կլինեն. «...բայց գիտենք, որ երբ Նա հայտնվի, Նրա նման կլինենք, որովհետև կտեսնենք Նրան, ինչպես որ է» (Ա Յովհ.3:2): Սա հեքիաթ չէ և կարծ ժամանակից իրականություն կդառնա:

Արդեն աշխարհի ստեղծումից առաջ ամենակարող Աստված հավիտենական թագավորություն էր նախատեսել իր որդիների և դուստրերի համար: Մարդկության անկումը չի կարող ձախողել կամ ոչնչացնել Աստծո ծրագիրը.

այն միայն ժամանակավորապես դադարեց: Մարդկությունը կամավոր ենթարկվել էր սատանայի հշխանությանը, բայց Տիրոջ կողմից փրկագնվեց առանց մարդկային միջամտության, որովհետև ինքը Տերը մեզ համար բացեց վերադարձի ճանապարհ: Փրկությունը միաժամանակ պատմական փաստ է և փրկության պատմության իրականություն: Ավետարանի միջոցով բերվեց ուրախության և ազատության պատգամը: Աստված առաջարկում է համապարփակ շնորհը: Փրկագնման շնորհիվ մարդկանց որդիները, որոնք ի ծնե եղել են մահվան որդիներ, դառնում են Աստծո որդիներ, որոնք ստացել են հավիտենական կյանքը:

Քանի որ Աստծո թագավորությունը հավիտենական թագավորություն է, բոլոր նրանք, ովքեր ցանկանում են այնտեղ ապրել, պետք է ունենան հավիտենական կյանք: Ահա թե ինչու «Վերստին ծնունդը» բացարձակապես անհրաժեշտ է: «Եթե մեկը վերստին չծնվի, Աստծո առքայությունը չի կարող տեսնել» (Հովհ. 3:3): Այդ ծննդի համար սերմը Աստծո խոսքն է, որն իր մեջ կրում է կյանքի սաղմը: Սուրբ Հոգին իշնում է նրանց վրա, ովքեր հավատքով ընդունում են Աստծո խոսքը: Բնական ծննդի միջոցով դարձանք երկրային, ժամանակավոր կյանք ունեցող արարածներ: Խոսքի և Հոգու

միջոցով Աստված հավիտենական կյանք է դնում փրկագնվածների մեջ. «Վերստին ծնված լինելով ոչ թե ապականության սերմից, այլ անապական սերմից, Աստծո կենդանի ու հավիտենական խոսքով» (1 Պետր. 1:23): Նա, ով հավատում է, որ Ճիսուսը իր Տերն ու Փրկիչն է, անձանք կունենա փրկության փորձառությունը: Ծնորհքի այդ անզուգական առաջարկը բոլոր նրանց համար է, ովքեր ուզում են այն ընդունել, քանի դեռ շարունակվում է փրկության օրը: Փրկագնումը չի կատարվում ուսուցման կամ գիտության միջոցով, այն գտնվում է միայն Փրկչի մեջ, և միայն Նրա մեջ է պետք փնտրել այն:

Ոչ ոք չի կարող պատկերացնել, թե ինչքան սարսափելի կլինի հավիտենության մեջ նրանց համար, ովքեր մերժեցին փրկությունը: Մեր մահվան ժամին ենք հանդիպում դաժան իրականությանը. այն ժամանակ նույնիսկ նրանք, ովքեր չեն հավատացել մահից հետո կյանքին, կտեսնեն, որ մահով ամեն ինչ չի վերջանում:

Մեր Տերն ու Փրկիչը անհամեմատելի կերպով տարբերվում է կրոնի բոլոր հիմնադիրներից: Վիրավորական է Նրան համեմատել որևէ մարդու հետ և նրան կոչել պարզապես «մարգարե»: Բոլոր

կրոնական փիլիսոփաները թաղվել են իրենց գաղափարներով: Նրանցից ոչ մեկը հարություն չի առել: Նրանք միայն մեզ նման մարդիկ էին և չեն կարող օգնել ո՞չ իրենց, ո՞չ էլ ուրիշներին: Հավիտենապես կա միայն Մեկը, որ կարող է ասել. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը» (Յովհ.14:9): Միայն Քրիստոսով Աստված հանդիպեց մեզ, և միայն Նրանով կարող ենք հանդիպել Աստծուն: Միայն Մեկի միջոցով Հայրը բացահայտվեց երկրի վրա, այսինքն՝ իր Որդու միջոցով, որով Նա մեզ դարձրել է իր որդիներն ու դուստրերը: Միայն Մեկը կարող էր ասել. «Ինձ տեսնողը Յորը տեսավ»(Յովհ.14:9): Իսկապես, շատ ճանապարհներ են տանում Հռոմ, բայց միայն մեկն է տանում Աստծո մոտ:

Սիրելի՝ ընթերցող, հուսով եմ այս շարադրանքի մեջ կգտնեք ուղեցույց ձեզ համար: ճշմարիտ հավատքը չի ապավինում մեռած փրկչին, այլ միայն կենդանի ու հարուցյալ Փրկչին, ով հաղթեց մահին, բարձրացավ երկինք, ապրում է հավիտյան և Սուրբ Յոգով ապրում է իրեն պատկանողների մեջ(Հայտն. 1:18): Նա ոչ միայն ասաց. «Ես եմ հարությունն ու կյանքը», այլև տվեց դրա անհերքելի ապացույցը: Նա երաշխավորեց մեր հարությունը. «Ես եմ հարությունն ու կյանքը. ինձ հավատացողը թեկուզ

մեռնի էլ, կապրի: Եվ ամեն ոք, ով կենդանի է ու ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի. սրան հավատու՞մ ես» (Հովհ.11:25,26):

Սիրելի՝ բարեկամ, միայն մեկ ճանապարհ կա, որ տանում է փրկության: Միայն մեկ ճշմարտություն կա, միայն մեկ Փրկիչ՝ Յիսուս Քրիստոսը: Ով ուզում է հասնել հավիտենական նպատակին, պետք է երես թեքի ամեն ինչից և դուրս գա ամեն կրոնական խառնաշփորտությունից, Բարելոնից և հավատա Տեր Յիսուսին որպես իր անձնական Փրկչի: Կրոնին պատկանելը ոչ մի կապ չունի հոգու փրկության հետ: Ո՞չ հաղորդության խորհուրդը, ո՞չ էլ ոչ մի ուրիշ կրոնական գործողություն չեն կարող փրկել: Միայն Փրկչի մեջ ենք գտնում փրկությունը, միայն փրկագնողի մեջ ենք գտնում փրկագնում: Յուրաքանչյուրը պետք է անձնական հավատք ունենա միակ ճշմարիտ Աստծո հանդեպ, որը հայտնվեց մեզ Յիսուս Քրիստոսով և մեզ գնեց:

Նույնիսկ մեր ունեցած լավագույն մտադրությունները դատապարտված են ձախողման, որովհետև մարդը Աստծո առաջ արդարանում է միայն Աստծո Խոսքի՝ Աստվածաշնչի վրա հիմնված հավատքով: Դա շնորհիք ձրի և անվերապահ պարզեն է, որ Աստված տվել

է մարդկությանը: Եկեղեցու պատմության ընթացքում տարբեր տիեզերաժողովների ժամանակ բերված հավելումները, որոնք չեն ուսուցանվել սկզբնական քրիստոնեության մեջ, ոչ մի արժեք չունեն Աստծո աչքերի առջև:

Չեզ համար հնչել է Աստծո ժամը. սա է ձեր հնարավորությունը փրկությունն ընդունելու: Մեր Տեր և Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի Ավետարանը կդառնա ուրախության և ազատության Պատգամ ձեզ համար, որի ազդեցությունը դուք կզգաք: Յավատացեք, որ Տերը իր վրա է վերցրել ձեր մեղքերը և ձեզ ողորմություն արել: Բոլորին կոչ է արվում վերադառնալ աստվածաշնչային վստահելի հավատքին, որն ունեին բոլոր մարգարեներն ու առաքյալները: Ոչ ոք չպետք է թույլ տա, որ իրեն խաբեն և մոլորեցնեն հավիտենությանը վերաբերող հարցերում: Յուրաքանչյուրը կարող է ստանալ Աստծո փրկությունը և ունենալ այն վստահությունը, որ ինքն ընդունված է Տիրոջ կողմից:

Յենց այնտեղ, որտեղ գտնվում եք, կարող եք խոսել Աստծո հետ և աղոթքով ասել Նրան. «Տեր Յիսուս Քրիստոս, հավատում եմ, որ մեռար ինձ՝ մեղավորիս համար: Յավատում եմ, որ ինձ գնել ես,

ընդունել ես:Տէր, ես պատկանում եմ քեզ այս ժամանակում և հավիտենության մեջ: Ով իմ Աստված, Դու հանդիպեցիր մեզ Յիսուս Քրիստոսով, Նրանով ուզում եմ հանդիպել ես քեզ»:

Խնդրում եմ, հավատացեք 103 սաղմոսում ասվածին, ընդունեք այն անձամբ ձեզ համար և գոհացեք Տիրոջից իր շնորհքի համար. «Ով իմ անձս, օրինէ Տէրը ու այն ամէնը, որ իմ ներսիդիս է՝ անոր սուրբ անունը: Ով իմ անձս, օրինէ Տէրը եւ անոր բոլոր բարերարութիւնները մի մոռնար: Որ կը քաւէ բոլոր անօրէնութիւններդ ու կը բժշկէ քու բոլոր հիւանդութիւններդ, որ կը փրկէ քու կեանքդ ապականութենէ եւ կը պսակէ քեզ ողորմութիւնով ու գքութիւնով...» (Սաղմ.103:1-4):

## ԱՆՎԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՏՐՈՒ

Հրատարակվել են նույն հեղինակի հետևյալ գրքույկները՝ «Մկրտություն, Տերունական Ընթրիք, Ոտնալվա», «Գրված է», «Աստված և Նրա ծրագիրը մարդկության համար», «Դիսուս Քրիստոսի գալուստը», «Սկզբում էր Խոսքը, ոչ թե մեկնությունը»:

Այս գրքույկներից մեկը կամ մի քանիսը անվճար ստանալու համար ներքոհիշյալ կտրոնը փակ ծրարով ուղարկեք հետևյալ հասցեով.

Հայաստան, 375010 Երևան 10 ա/ա 68,

Հայաստանի ազատ միսիոներների կենտրոն

---

Այս, ես ցանկանում եմ անվճար ստանալ հետևյալը:

- Մկրտություն, Տերունական Ընթրիք, Ոտնալվա
- Գրված է...

Իմ հասցեն

Ազգանունը -----

Անունը -----

Փողոցը ----- N -----

Քաղաքը -----

Երկիրը -----